

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՍԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1921 ԹՎԱԿԱՆԻՆ

Խորհրդային կարգերի հաստատումով Հայկական հարցի «տնօրինությունը» անցավ բոլշևիկյան վարչակարգի ձեռքը, որը մինչև 1988 թ. այն ծառայեցնում էր իր շահերին, իսկ ներերկրային հայկական կնճիռները մաքրում ստալինյան հայատյացության սկզբունքներով: Այս առումով էլ Հայկական հարցի փուլային զարգացման մեջ գոյանում է մի յուրահատուկ ժամանակահատված, որը ընդգրկում է 1921-1923 թթ.: Պայմանականորեն միջանցիկ շրջան անվանելով այդ ժամանակահատվածը, նշենք, որ հենց այդ շրջանում էլ փորձեր արվեցին մեկընդմիջտ մոռացության մատնել, պատմության գիրկն ուղարկել Հայկական հարցը: Մակայն, ժամանակների տիրակալներին թեև հաջողվեց իրենց համար շահավետ լուծումների հանգեցնել Հայկական հարցը, բայց նրանք մոռացել էին, որ խորհրդային բռնատիրությունից դուրս ապրում է Մեծ եղեռն տեսած ու արևմտահայությանը փոխարինելու եկած մի սերունդ, որը վառ պահելով հայրենիքի նկատմամբ սուրբ զգացմունքները, ազգային ու պետական մտածողությունը, ազգային գաղափարախոսությունը, նորից միջազգային հնչեղության է հասցնելու ազգային գերխնդիրը:

Հայաստանի բռնի խորհրդայնացումից հետո մոռացության մատնվեցին ազգային հարցի լեռնային «իմաստուն» քաղաքականության սկզբունքները, սկսվեցին բռնություններն ու ձերբակալությունները, հետապնդումների ասպարեզի վերածված Հայաստանում ոչ թե հոգ էր տարվում օրինական վարչակարգ ստեղծելու համար, այլ տանջահար երկիր ներմուծվեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, որի պայմաններում հայ ժողովուրդը հայտնվեց փրկիչ անվանյալների ճիրաններում:

Հայաստանի խորհրդայնացման հարցում համերաշխություն չկար Թուրքիայի և բոլշևիկների միջև: Թուրքիան ավելի շահած կլիներ, եթե կայանար, իհարկե, իր հսկողության տակ, հայկական պետականությունը, որն, ի վերջո, պատնեշի դեր կկատարեր Ռուսաստանի ծավալապաշտության դեմ: Թուրքերը քաջ գիտակցում էին, որ վաղ թե ուշ խորհրդային իշխանությունը բախելու էր իրենց դուռը: Այդ իրողությունը առավել վաղ կլիներ, եթե բոլշևիկները ժամանակին զգային Թուրքիայի հարցում իրենց ձախողումը, առավել ևս, եթե ակնհայտ դառնար դեպի Հնդկաստան ճանապարհի հարթելու պարտավորություն ստանձնած Քեմալի խորամանկությունը:

Բոլշևիկների համար Հայաստանի խորհրդայնացումը միջոց էր քեմալականության ձեռքով Արևելքում և Հնդկաստանում, Միջին Արևելքում կարմիր դրոշ ծածանելու համար, և այդ իրադարձությունների տարափների տակ Հայաստանը կկորցնեք իր ինքնությունը՝ վերածվելով անդեմ կցորդի: Իրենց տխուր դերակատարումն ունեին նաև համաշխարհային սոցիալիստական հեղափոխության սայլին լծված խանդավառ հայ բոլշևիկները: Նրանք ձգտում էին, որ իրենց բազմաչարչար հայրենիքը մասնիկը դառնա այդ «մեծ» իրադարձություններին, դառնա համաշխարհային կոմունիզմի տանիքի տակ ապրողներից մեկը: Պահանջված հենարան չունեցող բոլշևիկները ջանք չէին խնայում երկիրը տարակայունացնելու, բանակը կազմալու-

ծելու և բոլշևիկյան ծրագիրը դյուրացնելու գործում. «Հայաստանը մեզ համար առանձին հետաքրքրություն չի ներկայացնում, ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական տեսակետից... հայ բոլշևիկներն են մեզ համոզել, թե հայ ժողովուրդը ծարաւ է Կոմունիզմի... Հայաստանի անկախութիւնը ոչ միայն չենք վերացնի, այլ ընդհակառակը, կաջակցենք նրան, որովհետեւ դա մեզ հարկաւոր է Ազրբեյջանը Թուրքիայից բաժանելու համար,- 1921թ. Փարիզում Ա. Սահարոնյանի հետ զրոյցի ժամանակ ասել է խորհրդային դիվանագետ Կրասինը, բազմանշանակ խորհուրդ տալով չխաբվել,- մեր և թուրքերի ժամանակաւոր բարեկամութեամբ»¹:

Բազմախոսուն փաստերի ճնշման տակ հնարավոր չէ համաձայնվել Գերսամ Ահարոնյանի բացարձակապէս կուսակցական նկատառումներով հնչեցրած այն մտքին, թե բոլշևիկները վերաքննելու էին Ալեքսանդրապոլի պայմանագիրը, բայց «դաշնակցականները սարքեցին 1921 թ. փետրվարի 18-ի բոլորովին ազգավնաս արկածախնդրութիւնը»², և Մոսկվան հրաժարվեց հայանպաստ քայլերից: Հեղինակը, սակայն, անտեսում է այն փաստը, որ բոլշևիկներն այլևս անկարող էին ազդել Թուրքիայի վրա, քեմալական շարժումն արդէն ամրապնդվել էր, նոր պանթուրքիզմը նոր ծրագրեր էր մշակում: Ահա թե ինչու, բազմաթիվ բողոքներից ու նոտաներից հետո միայն, 1921 թ. ապրիլի 22-ին, թուրքերը հեռացան Ալեքսանդրապոլից ու գաւառից: Բայց այս փաստը չի տեղավորվում Հայկական հարցի լուծման շրջանակներում, որովհետև այս դեպքը պարզապէս 1920 թ. օգոստոսի 24-ի համաձայնագրի կատարումն էր:

Հայաստանի Հեղկոմը ժամանելով Երևան (դեկտեմբերի 4)՝ իր դժգոհությունն է արտահայտում Լեզրանի կնքած դեկտեմբերի 2-ի համաձայնագրի նկատմամբ, առավել ևս, որ ռազմահեղափոխական կոմիտեի կազմում էին ընդգրկվել դաշնակցականներ Դրոն ու Հ. Տերտերյանը: Վերջիններիս հեռացնելով կոմիտեի կազմից, գիտական կոմունիզմի ասպետները չէին ընդունում, որ իշխանության խաղաղ փոխանցում է կատարվել, ու մտադիր էին բորբոքել բանվորա-գյուղացիական հեղափոխություն և արյան ճանապարհով հաստատել խորհրդային կարգեր: Հեղկոմի գործունեությունը այդուհետ ուղղվեց այդ ծրագրի իրականացմանը և դեկտեմբերի 6-ից, խախտելով դեկտեմբերի 2-ի համաձայնագրի սկզբունքները, սկսվեցին ձեռքարկելու նու հալածանքները, բռնագրավումները, սովի ճիրաններում հայտնված երկրից հավաքվեց նաև սերմացուն ու հատուկ շարայունով՝ «Պրոլետարիատի առաջնորդին հայ ժողովրդին» կարգախոսով ուղարկվեց Ռուսաստան:

Հեղկոմը մոռացության մատնելով հայ ժողովրդի հոգսերն ու սպասելիքները, օր օրի ավելի էր խստացնում «հակահեղափոխականների» դեմ պայքարը: Գյուղերում, սկզբում տարերայնորեն, ապա կազմակերպված սկսվեցին դիմադրություններ, ժողովուրդը գյուղերից վճռում էր հեղկոմների անդամներին, թույլ չէր տալիս գյուղ մտնել չեկիստներին: Ստեղծվում էր վտանգահարույց վիճակ, երբ բոլշևիկները օգտագործելով առիթը, կարող է սկսեին կարմիր տեռորը: Ավիս Նուրիջանյանին ու Գևորգ Աթաբեկյանին այդ հնարավորությունից զրկելու նպատակով, փետրվարի սկզբներին Ս. Վրացյանի գլխավորությամբ կազմավորվում է «Հայրենիքի փրկութեան կոմիտե», որը ժողովրդին հասցնելով ավիսների նախապատրաստվող դավադրությունը, կոչում էր զգաստության:

¹ Ահարոնյան Գ., Մարդարապատից մինչև Սևր և Լոզան, Բոստոն, 1943, էջ 122:

² Ահարոնյան Գ., նշ. գիրքը, էջ 159:

Հեղկոմի Երևան գալով այն հույսն էր փայփայվում, թե Խորհրդային Ռուսաստանի միջնորդությամբ լուծում կստանան նաև վիճելի տարածքների ու Հայաստանից զավթված շրջանների հարցը: Սակայն Հեղկոմը, գնալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի ճանապարհով, Ադրբեջանի նկատմամբ որևէ պահանջներ չներկայացրեց, թեև հայտնի էր, որ 1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի ղեկավար Նարիմանովը Հայաստանի անբաժանելի մաս էր ճանաչել Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը: Ինչպես հետո պարզվեց, դա հեղափոխական ոգևորություն ստեղծելուն ուղղված քայլ էր, և կարմիր Ադրբեջանը շուտով հրաժարվեց իր հայտարարությունից: Հակառակ այդ ամենին, 1921 թ. հունվարին Հեղկոմի պաշտոնաթերթ «Կոմունիստը», իր խմբագրականում խոսելով «Միացյալ և Անկախ Հայաստանի խնդրի» մասին, վերացական տեսակետ է հայտնում Արևմտյան Հայաստանի հարցի մասին, անտեսում շահարկվող 1914 թ. սահմանները վերականգնելու խոստումը, հիշեցնում, որ Խորհրդային Ռուսաստանը մտադրություն չունի այդ խնդիրների հարցում միջնորդի դեր ստանձնելու և այլն: Այսպիսով արձանագրվում էր, որ Հայաստանի նոր իշխանությունը անկարող է որևէ քայլ ձեռնարկել Հայկական հարցի ուղղությամբ, որ այդ խնդիրների լուծման մենաշնորհը կամավոր զիջվում է Խորհրդային Ռուսաստանին:

Հեղկոմի գործունեության հետևանքով ժողովուրդը օտարվում էր իշխանությունից, և ստեղծվում էին բաժանման անջրպետներ, որի արդյունքում էլ ծավալվում էր դիմադրողական շարժումը, որը անխուսափելիորեն վերածվելու էր զինված ապստամբության:

1921 թ. փետրվարի 18-ին ապստամբական ուժերը «Հայրենիքի փրկության կոմիտեի» գլխավորությամբ գրավեցին Երևանը: Փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը Հայաստանի արդարադատության կոմիսար, պոլսեցի թուրք Սուլեյման Նուրիի, Ավիսի և Գ. Աթարբեկյանի նախաձեռնությամբ Երևանի բանտում, թուրք մսագործի ձեռքով, կատարվեց ահավոր սպանող կացնահարվեցին 50 բանտարկյալներ, որոնց թվում էին ժողովրդական հերոս, Բաքվի ինքնապաշտպանության ակտիվ կազմակերպիչ, Բաքվի կոմունայի հայկական ուժերի հրամանատար Համազասպը, հեծելազորի հրամանատար, Կարսի պաշտպանության մասնակից, Ղարաքիլիսայի հերոսամարտի կազմակերպիչներից գնդապետ Ն. Ղորղանյանը, Ալեքսանդրապոլի ոստիկանական գործի պետ Սերգոն և այլ նշանավոր զինվորական ու քաղաքական գործիչներ, որոնց ինքնությունը խոշտանգումների պատճառով հնարավոր չէրավ պարզել:

Փետրվարի 18-ին հրավիրված ընդլայնված նիստում Փրկության կոմիտեի կազմը լրացվեց նոր անդամներով և այն, ստանալով կառավարության լիազորություններ, բոլշևիզմի դեմ պայքարի և Հայաստանի փրկության համար հեռագրով օգնություն խնդրեց մի շարք երկրների կառավարություններից:

Օրջոնիկիձեն հեռագրով Մ. Վրացյանից պահանջեց անհապաղ հանձնել իշխանությունը: Դրությունը գնալով դառնում էր վտանգահարույց, և միջնորդի պարտականությունը իր վրա վերցնելով՝ մարտի 4-ին Երևան հասավ Հովհաննես Թումանյանը: Հինգ օր Հայաստանում մնալուց հետո, բանաստեղծը Օրջոնիկիձեին նամակով տեղեկացրեց, թե Թիֆլիսում սխալ պատկերացում է կազմվել Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ, որ կատարվածը ոչ թե դաշնակցականների խռովություն է, այլ համաժողովրդական ապստամբություն, և խնդրում էր խաղաղ ճա-

նապարհով լուծել հարցերը ու չդիմել եղբայրասպան գործողությունների:

Համաշխարհային հեղափոխության ասպետները չէին կարող հանդուրժել, որ բոլշևիզմը պարտություն է կրել, և Կարմիր բանակի զորամասերն ուղղվեցին Հայաստան: Ուժերի գերակշռություն ունեցող բոլշևիկները ապրիլի 4-ին վերազավթեցին Երևանը:

Փետրվարյան հեղափոխությունը հայ ժողովրդի վերջին ճիգերից մեկն էր իր ճակատագրի տնօրինությունը իր ձեռքը վերցնելու, Հայկական հարցը լուծելու ճանապարհին: Փետրվարյան իրադարձությունները ցույց տվեցին, որ բոլշևիզմը սխալ հաշվարկ էր կատարել: Դավերի ճանապարհով բռնի խորհրդայնացնելով Հայաստանը, նրանք անկարող գտնվեցին ոչնչացնել հայ ազգային գաղափարախոսությունը, մոռացության գիրկը զցել ազգային գերխնդիր Հայկական հարցը:

Փետրվարյան հեղափոխությունը լուրջ տեղաշարժ մտցրեց բոլշևիկների քաղաքականության մեջ: Վերանայելով թույլ տված սխալները, բոլշևիկյան վարչակարգը սկսեց առավել զգուշավորությամբ մոտենալ ազգային հանրապետությունների նկատմամբ իրականացվող քաղաքականությանը: Մերմանվում էին եղբայրության ու բարեկամության գաղափարները, որոնց օգնությամբ փորձ էր արվում հաշտեցման դիրքերի բերել միմյանց նկատմամբ բազում ազգային խնդիրներ ունեցող ժողովուրդներին: Այդ նպատակին էր ծառայելու նաև Անդրֆեդերացիայի կազմավորումը (1922 թ. մարտի 12):

Սկսվում էր Հայկական հարցի ամենադավաճանական շրջանը: Արևելահայությանը, որ ընկել էր բոլշևիկյան կապանքների մեջ, կենտրոնական իշխանությունը յուրահատուկ լուծումներ էր պարտադրում Հայկական հարցին: Հայ ժողովրդի փետրվարյան հաղթանակի օրերին, երբ երկրում վերացել էր բոլշևիկյան վարչակարգը, Մոսկվայում տեղի էին ունենում թուրք-խորհրդային բանակցություններ, որի առանցքային հարցերից մեկն էլ Հայկական հարցն էր: Այն, որ բոլշևիկները տրամադրված էին վերջնական տեսքի բերել իրենց իսկ տապալած հայկական խնդիրը, ակնհայտ էր, բայց քանի որ այդ ամենը կատարվում էին դիվանագիտական չափանիշների խախտումներով, առանձնապես Հայկական հարցում, բանակցություններին հաղորդում էր անօրինական երկխոսության տպավորություն: Մակայն դա կանխարգելիչ դեր չխաղաց, և առանց հայ ժողովրդի ներկայացուցչի մասնակցության, ոտնահարելով հայ ժողովրդի իրավունքները, բանակցությունները ավարտվեցին մարտի 16-ի պայմանագրով, որը միջազգային դիվանագիտության պատմություն մտավ «խայտառակ վաճառք» անունով:

Հայ ժողովուրդը դեռևս չէր սթափվել Բրեստի պայմանագրի հարվածներից, Բաթումի և Ալեքսանդրապոլի պարտադրված պայմանագրերից, պետականության կորստից, բռնի խորհրդայնացման մղձավանջից, երբ նրան պարտադրվեց պատմական հայրենիքից զրկվելու բռնի փաստաթուղթը: Քեմալ-Լենին սիրախաղն այս անգամ էլ ոտնահարեց հայ ժողովրդի իրավունքները, և «մաքսիմալ տերիտորիալ զիջումներ կատարվեցին թուրքերին՝ ի հաշիվ Հայաստանի»: Պայմանագիրը ուրիշ ոչինչ չէր, քան օրինականացումը «...իմպերիալիզմի դեմ միջազգային հեղափոխության շահերի համար... թուրքերի զավթումը», - գրում էր Բ. Բոքյանը³:

Թաքցնելու ոչինչ չկար: Բանակցությունները շարունակվում էին (սկսվել էին

³ Բոքյան Բ., Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը (ռուսերեն), Մոսկվա, 1929, էջ 285:

1921 թ. փետրվարի 26-ին), երբ մարտի 4-ին լույս տեսավ Ստալինի «Սկաչկո» ծածկանունով «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը, որտեղ երդվյալ հայատյացը Հայաստանին խորհուրդ էր տալիս շարժվել լենինյան սկզբունքներով և հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի հրաժարվել Թուրքիային ներկայացվող հողային պահանջներից, այդ հեղափոխությանը զոհաբերել ոչ միայն տարածքներ, այլև «իրենց ցեղակիցների խմբերին»⁴:

Նույն միտքը Շանթի պատվիրակությանը հաղորդեց Չիչերինի տեղակալ Լ. Կարախանը՝ ասելով. «Եթե վաղը մեր ընդհանուր շարժման շահը պահանջե մեզանից զոհել Անդրկովկասի բովանդակ հայությունը մինչև վերջին հայը, մենք կարող ենք ոչ իսկ մեկ վայրկյան տատանում ունենալ այդ զոհողության առաջ»⁵:

Հայաստանի պատվիրակությանը թեև հրավիրել էին մասնակցելու բանակցություններին, և Ալ. Բեկզադյանն ու Ս. Տեր-Գաբրիելյանը իրենց հետ տարել էին «Հայաստանը մինչև վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» վերնագրով փաստաթղթեր՝ ակնկալելով, որ դրանք որոշակի դեր կխաղան Հայկական հարցի լուծման գործում, բայց պատվիրակությունը չարժանացավ բանակցություններին մասնակցելու իրավունքին:

Ստալինի և Լ. Կարախանի վերը բերված մտքերից կարելի է եզրակացնել, որ եթե Հայաստանում հաղթանակած չլինեք փետրվարյան հեղափոխությունը, ապա հարցականի տակ էին դրվելու նաև Արևելյան Հայաստանի և հայ ժողովրդի գոյությունը: Թերևս Լենին-Չիչերին համախոհությունը կարողացել էր հաղթող դուրս գալ ապագա բռնապետի հետ մրցավեճում և կարևորություն էին տվել փետրվարյան իրադարձություններին: Ամենայն հավանականությամբ, թուրքական կողմը ևս զգուշացել էր միջազգային կարծիքից, հեռու էր մնացել նոր պահանջներ ներկայացնելուց, քանզի զգույն էր, որ բոլշևիզմը հաստատուն կպահի նախանշված սահմանները, հետագայում ևս հողային պահանջներ չի ներկայացնի, որովհետև ռուսական ծավալապաշտությանը երբեք ձեռնտու չէր լինելու դեպի Միջերկրական ծով կամ համաշխարհային հեղափոխության ճանապարհին տեսնել միավորված Հայաստան:

Խորհրդային Հայաստանի վարչակարգը վերը հիշված փաստաթուղթը իր հետ տանում էր բանակցությունների լոկ պատմության առաջ արդարանալու նկատառումով, որովհետև համոզված էր, որ երբեք դերակատարում չի ունենալու վճռվելիք խնդիրների հարցում: Նման մտատանջություն ուներ նաև Ալ. Մյասնիկյանը, երբ 1923 թ. ասում էր, թե «...անցյալում սխալ է թույլ տրվել, որ արևմտահայ դատը արևելահայ ժողովրդի հարցին է միացվել» և «իրենք այլևս իրավասու չէին զգար հետապնդելու այդ դատը»⁶:

Թուրք-բոլշևիկյան բանակցություններն ավարտվեցին բարեկամության և եղբայրության մարտի 16-ի պայմանագրով: Հայաստանի Հանրապետությունը, որ 1920 թ. ուներ 61000 քառ. կմ տարածք, ամփոփվելու էր 29000 քառ. կմ սահմանների մեջ: Հայաստանը կորցրեց Կարսի մարզը, Սուրմալուի և Օլթիի գավառները, Արդահանը, Մարիդամիշը, Կադովանը: Պայմանագրով Նախիջևանը խլվեց ու որպես Աթաթուրքի կալվածք խնամակալության տրվեց Ադրբեջանին: Պայմանագիրը նախա-

⁴ Լազյան Գ., նշ. գիրքը, էջ 197-198:

⁵ «Հայրենիք» ամսագիր, 1954, թիվ 1-5, Հ. Տերտերյանի հուշերը:

⁶ Սեփարդյան Գ., նշ. գիրքը, էջ 166:

պատրաստությունն էր նաև Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու ծրագրի իրականացման:

Նախիջևանը համարելով պանթուրքիզմի ծրագրի շքամուտք, նրա խնամքը հանձնվում էր Ադրբեջանին՝ պայմանով, որ «Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»: Երրորդ պետությունը բնական է, որ Հայաստանն էր: Թուրքիան այդ հողվածով կապում էր նաև բոլշևիկների ձեռքերը, որպեսզի վերջիններս հետագայում, իրենց անկանխատեսելի քաղաքականության արդյունքում, եթե փորձեին անգամ վերականգնել պատմական արդարությունը, ապա չկարողանան վիճարկել Նախիջևանի կարգավիճակը: Ռուսաստանի բոլշևիկյան վարչակարգը ոչ միայն հավատարիմ մնաց պայմանագրի 3-րդ հոդվածը չխախտելու խոստումին, այլև թույլ տվեց, որ Ադրբեջանը, խախտելով պայմանագրի էլակետը, կազմավորի Նախիջևանի ինքնավար հանրապետությունը և այն համարի իր անբաժանելի մասը:

Ութերորդ հողվածով կողմերը պարտավորվում էին պայքարել այն ուժերի դեմ, որոնք կփորձեն կառավարության դեր ստանձնել այն տարածքներում, որոնք նվիրվում էին Թուրքիային: Բնական է, որ խոսքը Արևմտյան Հայաստանի մասին էր: Եթե հրաշքով, միջազգային որևէ պայմանագրով, հայության պատմական Հայրենիքին տրվեր ինքնավարություն կամ փորձ արվեր այնտեղ ստեղծել ազգային օջախ, ապա եղբայր երկրները ոչ միայն չէին ընդունելու այդ գաղափարը, այլև ոչնչացնելու էին ինչպես պայմանագիրը, այնպես էլ այն իրագործել պահանջող խմբերին: Ահազանգը ուղղված էր ազգային կուսակցությունների և հատկապես ՀՅ Դաշնակցություն կուսակցության դեմ:

Ցուցաբերելով մեծ «մարդասիրություն» և ցանկանալով ընդմիջտ ազատվել Արևմտյան Հայաստանում մնացած հայության բեկորներից, 12-րդ հողվածը այդ բնակիչներին իրավունք էր վերապահում «իրանց ունեցվածքը կամ դրա արժեքն իրենց հետ վերցնելով» ազատ հեռանալ Թուրքիայից: Նպատակը պարզ էր, Թուրքիան ցանկանում էր Արևմտյան Հայաստանում մաքրել հայության հետքերը, վերացնել ապացույցները՝ օրինակացնելով հայության պատմական հայրենիքի զավթումը:

1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ա. Մոսվյանը ստորագրեց Կարսի պայմանագիրը: Հետաքրքրական է, որ «բանակցությունների» ընթացքում, ամենայն հավանականությամբ պատմության համար, բոլշևիկյան Ռուսաստանի ներկայացուցիչ Գանեցկին ցուցաբերելով «անթաքույց» հայասիրություն, փորձում էր թուրքական կողմի մոտ գույթ առաջացնել, Հայաստանին զիջելու, որպես «զգացմունքային կարևորություն», Անիի ավերակները: Թուրքերը, իհարկե, զուրկ չէին «զգացմունքներից», բայց քանի որ գլխավորը հայության հուշերը ոչնչացնելն էր, ոչ թե պատմական հայրենիքի նկատմամբ վկայությունների պահպանումը, կտրականապես մերժեցին առաջարկը: Դիվանգիտական այդ ցուցադրական ելույթի հեղինակին ուրիշ ոչինչ չէր մնում անել, եթե ոչ հայտարարել, որ մերժումը ցավալի հիշողություն է դառնալու:

Թուրք-բոլշևիկյան համագործակցությունը բազմաչարչար հայ ժողովրդին մատուցեց դարի ամենամեծ դավը, Հայկական հարցի հերթական բզկտումը, որը այդուհետ իր վիրավոր կեցվածքով դառնալու էր թուրք-խորհրդային հետագա հակամարտության դամոկլյան սուրը, որը կոմունիստական վարչակարգը հանելու էր պատյանից միմիայն այն ժամանակ, երբ անհրաժեշտություն էր դառնում Թուրքիային զսպաշապիկ հագցնելը:

Հայկական հարցը ոչնչացնելու բոլշևիկյան գործընթացը, որ սկսվել էր Բրեստի պայմանագրով, չէր բավարարվելու մարտի 16-ի ուրացությամբ: Հայկական հարցին դեռևս սպասվում էին նոր փորձություններ, տարածքային նոր կորուստներ: Թուրք-բոլշևիկյան վերջին պայմանագիրը լրացումներ էր պահանջում: Դաշնակից Թուրքիայի համաշխարհային հեղափոխությանը նվիրվածությունը ավելի ոգևորելու նպատակով սկսվեց Արևելյան Հայաստանի տարածքների աճուրդ-վաճառքը, որի առաջին գոհը դառնալու էր Ղարաբաղը:

Հայկական տարածքների հարևան Ադրբեջանին բռնակցումը անվանելով ներխուրդային խնդիր, բոլշևիկյան Ռուսաստանը ծրագրավորված իրականացնում էր Հայկական հարցի լուծման իր քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1918 թ. որպեսզի կանխեր հարևան երկրի ոտնձգությունները, հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ Ղարաբաղն ու Զանգեզուրը համարում էր իր անբաժանելի մասը: Հատկապես ընդգծվում էին հայկական երկու տարածքները, որովհետև հենց դրանք էին մտնում պանթուրքիզմի ծրագրի առաջին փուլի մեջ: Այդ ծրագրի համաձայն, Ադրբեջանը ոտքի հանելով հայկական տարածքներում բնակություն հաստատած 700000 թաթարներին, տիրանալու էր Զանգեզուրին, Ղարաբաղին, Կարսի մարզին, Իրանական Ադրբեջանին և այդպիսով պանթուրքիզմի համար ճանապարհ էր բացելու դեպի Պարսից ծոց ու Միջին Ասիա: Բրեստի պայմանագիրը լուծեց այդ ծրագրի մի մեծ հատվածը, և եղբայր երկրները 1919 թ. գաղտնի պայմանագիր կնքեցին, որով գործադրման էր բերվում ծրագրի հաջորդ մասը:

Մուդրոսի զինադադարի պայմանագիրը նորից խառնեց պանթուրքիզմի խաղաքարտերը: Հայ ժողովրդին վերադարձվեցին Կարսի մարզն ու Նախիջևանի շրջանը, միջազգային իրադրությունը զարգանում էր ի վնաս Թուրքիայի: Հայկական հարցի բարեհաջող լուծման կանխատեսումները գնալով մեծանում էին: Կատարվեց սակայն անսպասելին՝ հաղթող տերությունները խրվեցին անհամաձայնության լաբիրինթոսի մեջ, սկսվեց թուրքերի անատոլիական շարժումը, այն գտավ իր հուսալի դաշնակցին՝ բոլշևիկյան Ռուսաստանին, և նորից ասպարեզ բերվեցին պանթուրքիզմի ծրագրի բաղկացուցիչ մաս ադրբեջանական պահանջները: Խնդիրը առավել դյուրին լուծելու, Մոսկվայի մոտ վստահություն ձեռք բերելու համար 1920 թ. ապրիլին Ադրբեջանը խորհրդայնացվեց: Այժմ արդեն հենվելով երկու դաշնակիցների՝ Բոլշևիկյան Ռուսաստանի ու Թուրքիայի վրա, կոմունիստ հորջորջվող ադրբեջանական մուսավաթականները սրերը դուրս բերեցին պատյանից ու արշավանք սկսեցին հայկական տարածքները բռնագավթելու համար: Մոսկվայի ու Բաքվի հորդորներով ազգային մտածողությունից հեռացած հայ բոլշևիկները տենդորեն նախապատրաստում էին պանթուրքիզմի ծրագրի իրականացումը՝ դրա մեջ տեսնելով համաշխարհային հեղափոխության հաղթանակի ապահովումը:

1920 թ. սեպտեմբերին, երբ սկսվեց թուրք-բոլշևիկյան զավթողական պատերազմը Հայաստանի Հանրապետության դեմ, երբ նոյեմբերին ծանր վիճակ էր ստեղծվել Հայաստանում, ժողովրդին ապակողմնորոշելու, թուրքական զավթիչների դեմ պայքարից հեռացնելու նպատակով Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը 1920 թ. նոյեմբերի 30-ին հայտարարեց, թե եղբայրական Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարում է Հայաստանի անբաժանելի մասը: Մուսավաթ-բոլշևիկների այդ «ցնցող» քայլը իրոք խաղաց իր դերը: Ղարա-

բաղի ժողովուրդը, որ մինչ այդ ակտիվ պայքար էր մղում աղբբեջանական զավթման դեմ, և գումարված արցախահայության համագումարները կտրականապես մերժում էին աղբբեջանական լուծը ընդունելու պահանջներն ու որոշում միանալ Մայր Հայրենիքին, այժմ արդեն հույսեր էին փայփայում, թե հնարավորություն է ստեղծվում Արցախյան հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Սակայն դա, բարեբախտաբար, գերակշռող տեսակետ չէր և Թևանի (Թևան Ստեփանյան), նրան օգնության գնացած սպա Տեր-Պետրոսյանի խումբը, չվստահելով վերոհիշյալ հայտարարությանը, շարունակում էին պայքարը:

Արցախահայության համար կացությունն առավել ծանրացավ, երբ իր խնդրի լուծմանը ներգրավվեց նաև ազատարար հորջորջվող Կարմիր բանակը: Մինչ այդ ունենալով անգլիացիների պաշտպանությունը, մուսավաթականները Արցախի գեներալ-նահանգապետ կարգեցին հայտնի հայակեր Խոսրով բեկ Սուլթանովին, որը փորձում էր սարսափի ճանապարհով ընկճել արցախահայության դիմադրությունն ու երկրամասը բռնակցել Աղբբեջանին: Աղբբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուն պես այս արյունարբուն իրեն համարեց Ղարաբաղի հեղկումի նախագահ: Արցախահայությանը օգնելու նպատակով Արցախ էին մտել Դրոյի, Նժդեհի ղեկավարած ջոկատները: 1920 թ. մայիսի առաջին օրերին Արցախ հասավ Օրջոնիկիձեի պատվիրակը և Դրոյից պահանջեց դադարեցնել դիմադրությունը: Միաժամանակ լուրեր էին տարածվում, թե Հայաստանում հաղթանակել է մայիսյան ապստամբությունը և հետագա պայքարն անիմաստ է:

1920 թ. մայիսի 24-ին Դրոն, Նժդեհը, գնդապետ Միրիմանյանը և Արսեն Միքայելյանը գումարում են խորհրդակցություն, որտեղ որոշվում է իշխանությունը հանձնել Արցախի բոլշևիկներին և հեռանալ Արցախից:

Մայիսի 26-ից բժիշկ Համբարձումյանի գլխավորած Արցախի իշխանությունը համարվեց Աղբբեջանի ենթակայության ներքո գտնվող մարմին և Արցախը բռնակցվեց Աղբբեջանին: Շուտով իրադրությունը պարզվեց: Արցախահայությունը զգալով իր խաբվածությունը և լսելով Հայաստանում հաղթանակած փետրվարյան հեղափոխության լուրը, դիմեց ապստամբության և մարտի սկզբներին Արցախն ազատագրվեց Աղբբեջանական լծից: Հայ ժողովրդի հերոսական պայքարը չէր համապատասխանում թուրք-բոլշևիկյան ծրագրին, և Կարմիր բանակի զորամասերը շուտով նվաճեցին Արցախը:

1921 թ. հունիսի 3-ին Խորհրդային Հայաստանի կառավարությունը հանդես եկավ հայտարարությամբ և կայացված համաձայնությամբ, Լեռնային Ղարաբաղը համարվում է ՀԽՍՀ-ի անբաժանելի մասը: Հայկական հարցի մի հատվածը կարծես լուծում էր ստանում, բայց բոլշևիկ մուսավաթականները, կանգնելով կատարված փաստի առաջ, պահանջեցին խնդրի վերաքննություն: Ս. Կիրովի գլխավորած հանձնաժողովը հունիսի 25-27-ը Թիֆլիսում գումարած նիստերում չկարողացավ խնդիրը լուծել և այն փոխադրվեց բոլշևիկների Կովկասյան Բյուրո:

Հունիսի 4-ի Բյուրոյի նիստում, որին մասնակցում էին Ստալինը, Մյասնիկյանը և Նարիմանովը, որոշվեց Արցախը միավորել Հայաստանին: Հաջորդ օրը, հուլիսի 5-ին, Ստալինի նախաձեռնությամբ, անտեսելով, որ Կովկասյան Բյուրոն հարցի քննությունը փոխանցել է ՌԿ/Բ/Կ Կենտկոմ, հաշվի նստելով աղբբեջանական կողմի այն սաղորիչ հայտարարության հետ, թե Արցախը Հայաստանին միացնելուց հետո Աղբբեջանի կառավարությունը հրաժարական կտա, և կվարկաբեկվի խորհրդային իշխանության հեղինակությունը, գումարվեց Բյուրոյի նոր նիստ, որտեղ ո-

րոշվեց, նկատի ունենալով շինծու այն ձևակերպումը, թե Արցախը տնտեսապես կապված է Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին:

Արցախահայությունը, սակայն, դառնությամբ ընդունելով անարդար վճիռը, երբեք չդադարեցրեց Մայր Հայրենիքին վերամիավորվելու պայքարը, որն իր բարձրակետին հասավ 1988 թ.: